

ՀՏԴ 93/94

Հ. Ե. Փանոսյան
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ
(XVII-XVIII ԴԴ.)

Բանալի բառեր՝ երկրամաս, կաթոլիկ, մահալ, գավառ, համայնք, պարսկական, խասս, պապ, առևտրական, եվրոպացի, կրոնավոր:

Ключевые слова: провинция, католик, магал, округ, сообщество, персидский, хасс, европеец, папа, коммерческий, религиозный.

Keywords: province, catholic, mahal, region, community, Persian, khass, papa, salesmen, European, ecclesiastic.

Կաթոլիկությունը Նախիջևանի երկրամաս էր ներթափանցել XIVդ. սկզբներին ֆրանցիսկյան և բենեդիկտյան կրոնավորների կողմից, որոնք լայն քարոզչություն էին ծավալել Նախիջևանի Ագատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալների հայկական գյուղերում և մեր մատենագրության մեջ հայտնի են ունիթոր կամ ունիթոռ անունով:

Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ հայ կաթոլիկ համայնքը մեծ հետք թողեց Նախիջևանի երկրամասի տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ստեղծման ու զարգացման գործում: XVIIդ. սկզբներին մինչև շահ Աբբաս I-ի (1587-1629թթ.) կողմից կազմակերպած բռնագաղթը Նախիջևանի երկրամասի Ագատ-Ջիրանի և Դարաշամբի մահալների 10 գյուղերում ապրում էր 1780 տուն կամ 19400 մարդ հայ կաթոլիկներ:

XVIIդ. ընթացքում Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկները հայտնվեցին պարսից արքունիքի ու արևմտյան պետությունների դիվանագիտական հարաբերությունների առանցքում, որի արդյունքում հայ կաթոլիկ բնակավայրերը «խասս» հայտարարվեցին, այսինքն՝ ենթարկվեցին անմիջապես շահին:

Այնուամենայնիվ XVIIIդ. կեսերին պարսկական պետության վարչաքաղաքական անկայուն համակարգի, դրանից բխող ծանր հարկապահանջության, կյանքի ու գույքի անվտանգության բացակայության, արժանա-

պատվության ոտնահարման պայմաններում Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների մի մասը մահմեդականացավ, իսկ մյուս մասը բռնագաղթվեց:

Նախիջևանի խնդիրներին վերաբերող յուրաքանչյուր լուսաբանում, որը նվիրված կլինի նրա պատմությանը, ժողովրդագրությանը, մշակույթին, պատմաճարտարապետական ժառանգությանը, չափազանց արդիական է ու հրատապ: Հայագիտության մեջ միայն վերջին տարիներին է անդրադարձ կատարվել նրա պատմության առանձին խնդիրների պարզաբանմանը, ներկայումս քաղաքական ավելի մեծ նշանակություն ու կարևորություն է ստանում Նախիջևանի ամբողջական պատմության ուսումնասիրությունը: Բռնակցված լինելով Ադրբեջանին՝ խեղաթյուրվել է նրա պատմությունն առավել մեծ թափով ու եռանդով վերջին քսան տարիների ընթացքում, որտեղ պետական մակարդակով ամբողջությամբ ոչնչացվել է հայկական մշակութային շերտը, իրենց «պատմագրության» էջերից մաքրվել են հայկական հետքերը՝ իր հայրենիքի անքակտելի մասը կազմող երկրամասից:

Սույն հոդվածում փոքրիկ անդրադարձ է կատարվել Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկ համայնքի ներքին կյանքին, որը մեծ արժեք ու հետաքրքրություն է ներկայացնում: Հայ և օտար աղբյուրների վերլուծության շնորհիվ վեր է հանվել մեկուկես հարյուրամյակ ընդգրկող ժամանակահատվածի հայ համայնքի կենսագործունեությանը վերաբերող ամբողջական պատկերը: Հայ կաթոլիկ համայնքը խոշոր դեր է խաղացել Նախիջևանի երկրամասի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Մենք սույն հոդվածում քննության կառնենք երկրամասում կաթոլիկության սկզբնավորման, տարածման, զարգացման, անկման և հայ կաթոլիկ համայնքի՝ Արևելքի ու Արևմուտքի դիվանագիտական շփումներում ունեցած դերին վերաբերող հարցերը:

Կաթոլիկությունը Նախիջևանի երկրամաս էր ներթափանցել XIVդ. սկզբներին՝ ֆրանցիսկյան և բենեդիկտյան կրոնավորների կողմից, որոնք լայն քարոզչություն էին ծավալել Թուման-ե Նախիջևանի* Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալների հայկական գյուղերում, և մեր մատենագրության մեջ հայտնի են ունիթոր կամ ունիթոռ անունով: Թուման-ե Նախիջևան վարչամիավորն ընդգրկում էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախճավան և Գողթն, Մյունիքի՝ Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ ու Ծղուկ գավառները: Այն հյուսիսարևմուտքից սահմանակից էր Երևանի վիլայեթին, արևելքից՝ Ղափանաթի օրոտին (գավառ): Երկրամասի բնական սահմաններն անցնում էին արևմուտքում՝ Արփա գետով, հյուսիսում՝ Վարդենիսի լեռնաշղթայով, արևելքում՝ Մյունյաց լեռնաշղթայով, հարավում՝ Արաքս գետի երկարությամբ ձգվող հարթավայրով [17, p. 303]: Թուման-ե Նախիջևանը բաժանվում էր երկու մեծ շրջանների՝ Ջուղայի և Շահապունիքի, որոնց գլխավոր քաղաքներն էին Օրդուբադն ու Նախիջևանը [23, p. 362]: Սրանք իրենց հերթին տրոհվում էին մահալների, Ջուղան՝ Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի, Շահապունիքը՝ Դարալագյազի մա-

հալի ու Միսականի օլքայի [12, էջ 47, 77]: Ագատ-Ջիրանի մահալը տարածվում էր Գեղան գետի ավազանում՝ ընդգրկելով Մեծ Հայքի Վասպուրական ու Սյունիք նահանգների Գողթն ու Երնջակ գավառները, արևելքում սահմանակցում էր Սյունյաց լեռնաշղթային: Սրան արևմուտքից սահմանակից էր Դարաշամբի մահալը, որից բաժանվում էր Երնջակ գետով, ընդգրկում էր Վասպուրականի՝ Նախճավան ու Սյունիքի ճահուկ գավառները: Դարաշամբի մահալը փոված էր Նախիջևան գետի ավազանում: Այն արևելքից սահմանակից էր Երնջակ գետին, հյուսիսից՝ Վայոց ձորի լեռներին, արևմուտքից՝ Արփա գետին, հարավային սահմանն հասնում էր մինչև Արաքս գետ [11]:

1318թ. Հռոմի Հովհաննես XXII պապի կոնդակով ստեղծվեց արևելյան գավառների արքեպիսկոպոսությունը, որի կենտրոնը Պարսկաստանի Սուլթանիե քաղաքն էր [15, էջ 1714]: 1330թ. Քոնսյում (բնակավայր Նախիջևանում Հ. Փ.) հավաքված 12 վարդապետներ՝ մեծ մասամբ Հովհաննես Քոնեցու աշակերտներից, որոշում են կայացնում ոչ միայն անձամբ, այլև իրենց ենթակա հավատացյալ ժողովրդով հնազանդվել Հռոմի պապին և ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքը: 1350թ. Նախիջևան քաղաքը դառնում է կաթոլիկ եպիսկոպոսության նստավայր, իսկ մեկ դար անց Սուլթանիեից եպիսկոպոսության կենտրոնը տեղափոխվում է այստեղ [6, էջ 200]: XIVդ. կեսերին դոմինիկյան կրոնավորներ Բարդուղիմեոս Բոլոնացու և Պետրոս Արագոնացու ակտիվ գործունեության արդյունքում Նախիջևանի վերոհիշյալ մահալներում ձևավորվեցին հայ կաթոլիկների կամ ունիթորների մի շարք համայնքներ [19, p. 514-522], որտեղ Ինտկենտիոս VI պապի 1356 թ. կոնդակով ձևավորվեց կաթոլիկ առանձին միաբանություն՝ դոմինիկյանների ուխտի գլխավորի անմիջական ենթակայությամբ [1, էջ 388]: Հայ կաթոլիկ համայնքի գործունեությունը տևեց շուրջ չորս դար՝ XIV մինչև XVIII դ. կեսերը [2, էջ 80]:

XVII դ. սկզբներին Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկ համայնքը բավականին մարդաշատ էր և ուներ տասը գործող եկեղեցի [3, էջ 148]: Ըստ Ղ. Ալիշանի՝ ունիթոր հայերի թիվը վերը նշված շրջաններում հասնում էր 19 հազարի: Այս ազգաբնակչությունը տեղավորված էր 3 քաղաքներում ու 12 գյուղերում և ընդհանուր առմամբ կազմում էր 1830 տուն [1, էջ 385-387]: Սակայն Ալիշանի մոտ մի փոքր վրիպակ կա, որը նույնությամբ կրկնել են ինդրին այս կամ այն կերպ անդրադարձած որոշ ուսումնասիրողներ: Համաձայն Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601թ. գեկուցագրի՝ գավառում ապրում էր մոտ 1780 տուն հայ ընտանիք կամ 19400 բնակչություն, որոնք տեղաբաշխված էին Նախիջևանի երկրամասի Ապարաններ, Ապրակունիս, Քոնա, Մալթաղ, Խոշկաշեն, Մեծշեն, Գանձակ, Շահապունիք, Ղարաղուշ, Ցղնա և հարևան Մակուի շրջանի Կեծուկ ու Արտազ գյուղերում: XVIIդ. սկզբներին այս բնակավայրերում հայ բնակչության կողքին հայտնվում են 193 մահմեդական ընտանիքներ [20, p. 416-449], որոնց էթնիկ պատկանելությունը ճշտել անհնար է:

Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկ համայնքի դերը մեծացավ հատկապես XVII դ.: Կաթոլիկ եկեղեցու սնեռուն ուշադրությունը Նախիջևանի վրա պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ այդ երկրամասի վրայով էին անցնում առևտրական տարանցիկ ճանապարհները և նրա բնակավայրերից շատերը (Նախիջևան, Ջուղա, Ագուլիս, Օրդուբադ, Շ. Փ.) միջազգային առևտրի կարևորագույն հանգույցներ էին, որտեղ Արևելքից ու Արևմուտքից հսկայական հարստություն էր կուտակվում: Սեֆյան շահերին Նախիջևանի կաթոլիկ հայերը հետաքրքրում էին այնքանով, որ արևմտաեվրոպական պետությունների օգնության կարիքը ունենալով՝ նրանք փորձում էին այդ երկրների օգնությամբ պայքարել Օսմանյան կայսրության դեմ և Արևմուտք էին ուղարկում Նախիջևանի և Ջուղայի հայ քրիստոնյա վաճառականներին, որոնք դիվանագիտական գործունեություն էին իրականացնում եվրոպական երկրներում:

Ընդառաջելով եվրոպացիների միջնորդությանը՝ դեռ շահ Իսմայիլ I-ն (1502-1524թթ.) էր մի շարք արտոնություններ շնորհել Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկներին [7, էջ 176]: Սակայն շահերի փոփոխության ժամանակ նախորդների շնորհումները կորցնում էին իրենց ուժը և կարիք ունեին վերահաստատման: Հռոմի պապի և արևմտաեվրոպական թագավորների միջնորդությամբ շահ Աբբասի (1587-1629թթ.) կառավարման շրջանում վերահաստատվեցին հին արտոնությունները, Նախիջևանի կաթոլիկ հայ համայնքների մեծ մասը «խասս» հայտարարվեց՝ իմունիտետի իրավունք ստացավ տեղական հարկահանների հանդեպ [1, էջ 394]: Պարսից արքունիքի հետ դիվանագիտական կապեր պահպանելը հիանալի առիթ էր տալիս Հռոմի պապին և արևմտաեվրոպական միապետներին՝ հովանավորելու Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկներին: Այս երկրներից շատ հաճախ դեսպանություններ էին գալիս Սպահան: Եվ նրանք բոլորն էլ տանում էին հանձնարարական նամակներ, որոնց մեջ Հռոմի պապը և արևմտաեվրոպական միապետները խնդրում էին շահերին հովանավորել և պաշտպանել իրենց կրոնակից հայ կաթոլիկներին [4, էջ 317]:

Այսպես, երբ Պողոս V պապի կողմից հատուկ պատվիրակ նշանակված Պողոս Զիթթադիսի կրոնավորը, Դոմինիկյան, Օգոստինյան և Կարմելիտական միաբանների ուղեկցությամբ՝ 1615թ. դեկտեմբերի 13-ին Ֆահրապատ քաղաքում ներկայանում է շահ Աբբասին, վերջինս մի շարք արտոնություններ է տալիս Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերին՝ մասնավորապես արգելվում են մանկաժողովները, վերադարձվում է բռնագրավված գույքը և կաթոլիկների կենտրոն հանդիսացող Ազատ-Ջիրանի մահալում նշանակվում է հայ կառավարիչ [15, էջ 606]:

Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի նկատմամբ ուշադրությունն ավելի է մեծանում XVII առաջին քառորդից, երբ Հռոմն սկսում է առանձին ուշադրություն դարձնել Արևելքի քրիստոնյաների վրա և ավելի լուրջ քայլերի է դիմում՝ նրանց իրեն ենթարկելու համար: 1622 թ. Գրիգոր XV պապը Հռոմում

հիմնում է կրոնական մեծ հաստատություն, որն ստանում է «Հավատի պրոպագանդայի սուրբ միաբանություն» անունը: Հայ կաթոլիկ գրականության մեջ այս միաբանությունը կոչվում է «Սուրբ ժողով տե փրոփականդայ ֆիդե», «Սուրբ ժողով տարածման հաւատոյ» և «Սրբազան համագումար հաւատոյ»: 1627թ. Ուրբանոս VIII պապը կաթոլիկ քարոզիչներ պատրաստելու համար Նախիջևանում հիմնում է բազմալեզու դպրոց [15, էջ 318]: Կաթոլիկ հայերի համար բացված այս դպրոցում ուսուցչություն էին անում Վատիկանից ուղարկված բազմաթիվ կրոնավորներ, որոնցից մեկը դոմինիկյան Պողոս Պիրոմալին էր, որը 1632թ. հաստատվել էր Հայաստանում և 1654-1664թթ. Նախիջևանի արքեպիսկոպոսն էր ու կառավարում էր կաթոլիկ հայերի համայնքը [15, էջ 606]: Վերջինս այն կրոնավորն էր, որի միջոցով «Փիլիպպոս կաթողիկոսն էջմիածնի գրեաց առ Իննչենցիոս Ժ գղաւանութիւն կաթողիկէ հաւատոյ, զոր ԻԵ եպիսկոպոսունք եւ ութ վարդապետք ստորագրեցին եւ ի ձեռն Պօղոսի Բիրոմալիի Տոմինիքանին առաքեաց ի Հռոմ» [14, էջ 177-178]:

1669թ. Կղեմես IX պապի, Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորի, Տուկանայի մեծ դուքսի և վենետիկյան սենատի հատուկ հանձնարարականներով Սպահան է ուղարկվում Նախիջևանի արքեպիսկոպոս Մատթեոս Հովհաննիսենցը՝ իրեն ենթակա հայ կաթոլիկների օգտին արտոնություններ ձեռք բերելու [8, էջ 64-67]: Այդ բանակցությունների շնորհիվ վերահաստատվեցին Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների նախկին արտոնությունները: Այսինքն՝ հայ կաթոլիկ համայնքները «խասս» հայտարարվեցին, ճանաչվեցին «ենթակա հատկապես և անմիջապես շահին, ազատ մասնավոր որևէ իշխանի իրավասությունից»: Դա նշանակում էր, որ կաթոլիկ համայնքներն այսուհետև գտնվելու էին շահի անձնական խնամակալության ու հովանավորության ներքո և անմիջականորեն նրան էին մուծելու հարկերը և տուրքերը կամ ձեռք էին բերելու հարկային «իմունիտետի» իրավունք [16, p. 385]: Այս իրավունքները Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկները ձեռք էին բերել դեռ շահ Աբբաս I-ի օրոք, սակայն պարսկական պաշտոնյաները անուշադրության էին մատնել շահերի հրամանները, և կարիք էր լինում, որ յուրաքանչյուր նոր շահ վերահաստատեր իր նախորդի առանձնաշնորհումները:

Կաթոլիկ եկեղեցու հարաբերությունները պարսկական արքունիքի հետ առանձին կարևորություն են ստանում XVIIդ. երկրորդ կեսին՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV ժամանակ: Հենց այս ժամանակ էլ Նախիջևանի երկրամասը դառնում է պարսկական արքունիքի և Արևմուտքի քաղաքական հարաբերությունների կարևոր հանգույց, քանի որ այդ առիթը կար, և դա Նախիջևանի կաթոլիկ հայերն էին, որոնք արժանացել էին Ֆրանսիայի թագավորի ուշադրությանը [4, էջ 323]: Այսպես, 1664 թ. փետրվարի 7-ին իր գրած նամակի մեջ Լյուդովիկոս XIV-ը ակնարկում էր, որ կաթոլիկներն էլ, ինչպես մյուս քրիստոնյաները, ենթարկված են Պարսկաստանում գործող «Իմամ Ջաֆարի» օրենքին [22, p. 288-289], որի համաձայն՝ ամեն մի քրիստոնյա, ընդունելով մահմե-

դականություն, տիրանում էր քրիստոնյա ազգականների ունեցվածքին [5, էջ 219-221]: Խնդրելով, որ վերացվի այս օրենքը, թագավորն շտապում էր ավելացնել, թե իր խոսքը միայն այն քրիստոնյաների մասին է, որոնք իրենց անվանում էին ֆրանկ (կաթոլիկ) և բոլորովին չի վերաբերում հերձվածողներին, այսինքն՝ ոչ կաթոլիկ հայերին [4, էջ 323]:

Չնայած Արևմուտքից հղված բազմաթիվ նամակներին ու դիմումներին՝ կաթոլիկ հայերի դրությունը շարունակում էր մնալ ծանր: 1682թ. հոկտեմբերի 15-ին Լյուդովիկոս XIV հանձնարարականով Պարսկաստան ժամանած՝ ճիզվիտական քարոզիչ հայր Պետրոսը, շահ Սուլեյմանին (1666-1694թթ.) է հաղորդում Ֆրանսիայի թագավորի մտահոգությունները Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի նկատմամբ կիրառվող շարունակական բռնությունների առնչությամբ [18, p.262-263]: Եթե XVIIդ. կեսերին Նախիջևանի երկրամասում հաշվվում էին 5-7 հազար հայ կաթոլիկներ, ապա XVIIIդ. սկզբներին նրանց թիվը չէր անցնում մի քանի տասնյակ մարդուց [10, էջ 9]: Այսպիսի ծանր պայմաններում էր ապրում արևմտաեվրոպական պետությունների ու Հռոմի պապի հովանավորությունը վայելող կաթոլիկ հայությունը: Սրա պատճառը Պարսկաստանի անկայուն վարչաքաղաքական համակարգն էր. շահերի հրամանները կամ չէին հասնում տեղի կառավարիչներին, կամ ուղղակի անտեսվում էին նրանց կողմից, և բնականաբար նման արտաքին դիվանագիտական միջամտությունները չէին կարող որևէ ազդեցություն ունենալ և կանխել այն բոլոր ապօրինությունները, որոնք բխում էին պարսկական նեխած պետական համակարգից:

Չնայած արևմտաեվրոպական պետությունների և Հռոմի պապերի հովանավորությանն ու շոշափելի օգնությանը երկրամասի կաթոլիկ հայերին՝ XVIIIդ. կեսերին նրանց կենսագործունեությունը դադարում է:

Նախիջևանի երկրամասի հազարավոր կաթոլիկ հայ ընտանիքներ 1746թ. արտագաղթում են Փոքր Ասիայի թուրքական տարածքներ, մասնավորապես՝ Ջմյուռնիա [1, էջ 406-407]: Կաթոլիկ հայերի մի քանի համայնքներ դավանափոխվում ու մահմեդականություն են ընդունում: Այս մասին Ղազար Ջահկեցին գրում է. «Նմանապես և յերկրին Նախիջևանայ Ախթարմայից գեղօրայքն բազումք դարձան ի կրօնս պարսից, որպես Սալիթաղ, Քոնա, որ գառաքինութեանց և մոլութեանց և զԱլպերտն անդ թարգմանեցին, և կէծուկ, սոքա ամենեքեան, իսկ Ապրակունիս, և Շահբունիս, և Խոշկաշէն և Ապարաններ որե եպիսկոպոսարան իւրեանց, սոցա մեծ մասն, բայց ի գեղաքաղաքին Ճահկայ եղեալ ախթարմայքն ոչ դարձան ի կրօնս պարսից վասն ազգիս միաբնակաց, որ գետեղեալ ենք ի միջի նոցա» [9, էջ 334]: Կաթոլիկություն ընդունած հայ բնակչությունը, կտրված լինելով իր եկեղեցուց, որի դերը անգնահատելի էր հայապահպանման գործում, հեռանալով իր ազգային մշակույթից, ավելի հեշտությամբ էր զոհ դառնում մահմեդական իշխանությունների ձուլման քաղաքականությանը [3, էջ 151]:

Այսպիսով, XVIIIդ. կեսերին վարչաքաղաքական անկայուն համակարգի և նրանից բխող ծանր հարկապահանջության, կյանքի ու գույքի անվտանգության բացակայության, արժանապատվության ոտնահարման պատճառներով Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի մի մասը մահմեդականացավ, իսկ մյուս մասը տարագրվեց: Հավատասփյուռ ժողովին ներկայացված մի զեկուցագրի համաձայն՝ Քոնստանդուպոլսի Ապարաններ գյուղերից «Մուլիխանի (Նադիր շահ 1736-1747թթ. Հ.Փ.) վերջին գազանային պատերազմներին» Հայ եղբարք քշուեցան [13, էջ 21]: Ղ. Ալիշանի տվյալներով այդ իրադարձություններից հետո Նախիջևան այցելած իտալացի միսիոներները հանդիպեցին ընդամենը 60-70 կաթոլիկ հայերի [1, էջ 387]:

Եզրակացություն. Եվրոպական պետությունների և Հռոմի պապի ուշադրությունը Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի նկատմամբ հսկայական տպավորություն պիտի թողներ պարսկա-թուրքական տիրապետության տակ տառապող հայության մնացած հատվածի վրա, քանի որ այդ ուշադրությունը երևակայական չէր, այլ իրական օգուտներ էր բերում, իհարկե, սա էլ իր հերթին պետք է արթնացներ այն հույսը, թե կարելի է դավանափոխությամբ հասնել ֆիզիկական ապահովության: Սակայն կաթոլիկ հայերը այդպես էլ ֆիզիկական ապահովության չհասան, սա հստակ երևում է Հայաստանում XVIIIդ. վերջերին միսիոներական գործունեություն ծավալած ճիզվիտական քարոզիչների նամակներից, որոնցից մեկում ասվում է. «...ես չեմ կարող առանց սարսափի հիշել, թե ինչպիսի ծանր պայմաններում էին ապրում Նախիջևանի գավառի հայ կաթոլիկները մահմեդականների մեջ...» [21, էջ 195]: Այնուամենայնիվ հայ կաթոլիկ համայնքը, ձևավորվելով որպես ինքնուրույն՝ ներքին կյանքով ապրող միավոր, մեծ նպաստ բերեց Նախիջևանի երկրամասի և Արևմուտքի ու Արևելքի միջազգային դիվանագիտական հարաբերությունների մեջ՝ կարևոր դեր խաղալով մի կողմից՝ Հռոմի պապի ու եվրոպական միապետների, մասնավորապես Ֆրանսիայի թագավոր Լուի XIV-ի, իսկ մյուս կողմից՝ պարսից շահերի արքունիքների միջև ընթացող դիվանագիտական շփումներում:

Г. Паносян

*Армянская католическая община в Нахичеванской провинции
(XVII-XVIII вв.)*

Католичество вошло в Нахичеванскую провинцию в начале XIV-ого века с помощью францисков и бенедиктов, которые в армянских селах Азат-Джиранкого и Дарашамбского магалах занимались проповедованием и в нашем библиографии известны под именем унитарии.

Ставшая установленной в пересечении Запада и Востока как торговый путь, армянская католическая община оставила большой след в создании и развитии экономических, политических и культурных связей в Нахичеванской про-

винции. В начале XVII века, до того, как шах Абас I организовал миграцию, в 10 селах Азат-Джиранской и Дарашамбской магалах жили 1780 домов или 19400 людей, которые были армянскими католиками. В течении XVII века армянские католики Нахичеванской провинции появились в центре дипломатических отношений персидского двора и западных стран, в результате чего армянские католические села были объявлены “хас”, то есть они платили налоги шахскому двору.

Тем не менее в середине XVIII века в результате неустойчивого административно-политического состояния, при отсутствии жизненной и материальной безопасности, часть армянских католиков, которые жили в Нахичеванском провинции стали мусульманами, а другая часть стала жертвой миграции.

H.E. Panosyan
Armenian Catholic Community in the Province of Nakhichevan
(XVII-XVIII Centuries)

The Catholicism entered the province of Nakhichevan at the beginning of the XIV century by the frantisek and benedicts, they make a preacher in the mahals of Azat-Jiran and Darashamb Armenian villages and they were famous by name unitor in the Bibliography. Being situated in the intersection of East and West, Armenian catholic community has left a trace to the creation and development of political, cultural development in the province of Nakhichevan.

At the beginning of the XVII century, before the migration, organized by shah Abas I in the villages of mahals Azat-Jiran and Darashamb, there lived 1780 houses or 19400 Armenian catholics. During the XVII century the Armenian catholics of the province of Nakhichevan appeared in the center of ratio of the Persian court and west countries, as a result of which the Armenian catholic residences were declared as, meaning that they would obey to the shah.

Nevertheless, in the middle of the XVIII as a reason of unstable conditions of administral—political situation and the absence of life and property security, part of Armenian catholics, who lived in the province of Nakhichevan became mohammedan, and the second part migrated.

Գ ր ա կ ա ն ն ի թ յ ն ի ն

1. Ալիշան Ղ., Միսակյան, Վենետիկ, 1893, 522 էջ:
2. Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, 105 էջ:

3. Բայբուրդյան Վ., XVII դ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, 1989, N 2 էջ 148:
4. Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Ե. 1969, 517 էջ:
5. Կարապետյան Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII-XVIII դդ.), ՊԲՀ, 1988, N 1, էջ 219-221:
6. Կոստիկյան Ք., Կաթոլիկական քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Արևելագիտական ժողովածու, XXI, Ե., 2002, էջ 200:
7. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Ե., 1959, 611 էջ:
8. Հովհաննիսյան Ա., Նոր նյութեր հայ-ունիթոքրական պատմագրությունից, «Արարատ», 1915, էջ 64-67:
9. Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, 704 էջ:
10. Ճեմճեմեան Ս., Նախիջեւանի Հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, 271 էջ:
11. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. N 1ա, վավ. 99:
12. Մատենադարանի պարսկերեն հրովարտականքներ, պրակ III, կազմեց՝ Ք. Կոստիկյան, Ե., 2005, էջ 47, 77:
13. Ոսկյան Գ., Համառոտ ակնարկ մը քարոզող և միաբանող եղբարց պատմության Հայաստանի մեջ, Բազմավեպ, 1922, հունվար, էջ 21:
14. Ստեփանոսի Ռօշքայ, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հրատարակեց՝ Հ. Համազասպ Ոսկեան, Մխիթ. Ուխտեն, Վիեննա, 1964, էջ 177-178:
15. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, մաս Գ, Պէրոյթ, 1959, 2305 էջ:
16. Bedros Bedik, Cehil Sutun, Vienna, 1678, 474 page.
17. Chardin J., Voyages en Perse, et autres lieux de l'orient, tom II, Amsterdam, 1735, 334 page.
18. Choix des lettres edificantes, ecrites des mission etrangeres, precede, de tableaux geographiques, historiques, politiques, religieux et litteraires, des pays de mission, Paris, 1835, 486 page.
19. Clement Galanus, Consillatio ecclesiae Armenae cum Romana, vol I, Roma, 1650, 771 page.
20. Ephemerides carmelitae, annus XI, Roma, 1960, p. 416-449.

21. Estat present du royaume de Perse, Paris, 1694, 289 page.
22. Raphael du Mans, Estat de la Perse en 1660, Paris, 1890, 421 page.
23. Relation du voyage d'Adam Olearius en Moscovie, Tartarie, et Perse, tom I, Paris, 1679, 686 page.

Տեղեկություններ հեղինակի մասին

Փանոսյան Հրաչյա Երանի - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ,

E-mail: hrach-84@list.ru

Տրվել է խմբագրություն 30.05.2013.